

# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏՆ ԱՅՑԵԼԵԼ Է ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔ

28.05.2014

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն այցելել է Գառնի համայնք:

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը, Գառնի համայնքի և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների ուղեկցությամբ շրջայց է կատարել համայնքում, տեղում ծանոթացել համայնքային ենթակառուցվածքների գործունեությանը, ինչպես նաև մասնակցել համայնքի մարզադպրոցի բակում անվանի ըմբշամարտիկ Ռազմիկ Կարապետյանի հուշարձանի բացման հանդիսավոր արարողությանը:

Անվանի ըմբշամարտիկի անունը կրող մարզադպրոցում տեղի ունեցած տոնական հանդիսությանը մասնակցել են նաև ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանն ու ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Գ. Ղազարյանը:

Հուշարձանի բացման արարողության շրջանակներում տեղի է ունեցել նաև Գառնի համայնքի երիտասարդ ըմբշամարտիկների բաց առաջնություն, որի առաջի տեղը գրաված պատանի ըմբշամարտիկին պարգևատրել է ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը:

Կոտայքի մարզպետը ողջույնի խոսքով դիմել է ներկաներին, համայնքի բնակիչներին ու հանդիսության մասնակիցներին շնորհավորել ինչպես Հանրապետության օրվա, այնպես էլ Գառնի համայնքի մարզադպրոցում տեղի ունեցող նշանակալի միջոցառման կապակցությամբ:

Այնուհետև Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն այցելել է <<Գառնիի առողջության կենտրոն>> ՓԲԸ, տեղում ծանոթացել առողջապահական հաստատության գործունեության ընթացքին, զրուցել աշխատակիցների հետ, քննարկել հաստատության արդիականացմանը միտված հարցեր:

Կոտայքի մարզպետը հանձնարարել է սեղմ ժամկետում կատարել <<Գառնիի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի գործունեության համակողմանի վերլուծություն, նախանշել հաստատության զարգացմանը, պայմանների ու մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը միտված ծրագրային ուղղություններ և կազմակերպել աշխատանքային խորհրդակցություն՝ առկա խնդիրներն առավել առարկայորեն քննարկելու և վերջիններիս լուծումներ տալու նկատառումով: